



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հասցե՝ Չարենց 46

Email: info@aarhus.am

Հեռ.՝ (+37410) 551364

ՌԵՕԿ_14/06
30_04_2014

ՀՀ բնապահպանության
նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Է. Փիրումյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Խնդրում եմ Երևանի Օրհուս կենտրոնին տրամադրել Երևան քաղաքի ջրային օբյեկտների աղտոտվածության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

- Երևանյան լճի, Գետառ և Հրազդան գետերի (Երևան քաղաքի վարչական տարածքի սահմաններում) աղտոտվածության վերջին տվյալները՝ ըստ «Հայեկոմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի, մասնավորապես՝ ինչպիսի՞ քիմիական աղտոտիչներ են գնահատվել վերոնշյալ ջրային օբյեկտներում, ի՞նչ քանակության և դրանց համեմատականը ՍԹԿ-երի հետ:
- Արդյո՞ք կա ուսումնասիրություն, թե ինչի՞ հետևանք են հանդիսանում այդ աղտոտիչների առկայությունը ջրային օբյեկտներում:
- ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվել է արդյո՞ք Հրազդան գետ ուղղակի ձևով լցվող արտադրական և կոմունալ-կենցաղային հոսքաջրերի գույքագրում (ի՞նչ կազմակերպությունների/առանձնատների կողմից են լցվում, ջրահեռացման ի՞նչ ծավալ ունեն, ինչպիսի՞ վնասակար նյութեր են պարունակում), եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել գույքագրման արդյունքները:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով

Երևանի Օրհուս կենտրոնի
համակարգող

Սիլվա Այվազյան